Սակայն, շրջանային նոր կազմակերպութիւնը յաջողութիւն չունեցաւ. փաստօրէն Ղարաբաղն ու Զանգեզուրը ապրում էին առանձին, իրարից կտրուած, և Զանգեզուրի կացութիւնը երթալով վատանում էր: Մի կողմից նիւթական ու պարենաւորման սուր տագնապը, միւս կողմից՝ հողային վէճերը, հայ-թրքական յարաբերութիւնների լարուելը — այս ամենը անհրաժեշտ դարձրին աւելի ուժեղ իշխանութեան ստեղծումը: Օգոստ. 15-ին գումարուեց համազանգեզուրեան գործադիր կոմիտէի նիստը՝ բաղկացած 31ական հայ ու թուրք պատգամաւորներից, որոնք ընտրուել էին Օգակոմի ներկայացուցիչների ղեկավարութեամբ, գաւառի 31 գիւղախմբերից: Հայ պատգամաւորներից 24 դաշնակցականներ էին, մնացած 7ը՝ սոց.-դեմոկրատ, սոց.-յեղափոխական և այլն: Թուրքերից՝ 28 մուսաւաթական և 3ը՝ սոց.-դեմոկրատ:

8 օրուայ նիստերի ընթացքում լուծուեցին գաւառին վերաբերող խնդիրները և ընտրուեց 4 հոգինոց մի դիւան, 7 անդամներից հողային կոմիտէ, գաւառապետ, օգնական, շրջանների ոստիկանապետներ, որոնք և կազմեցին գաւառի իշխանութիւնը՝ դիւանի վերին հսկողութեան տակ: Դիւանի նախագահ ընտրուեց Նազար բէգ Սուլթանովը, փոխ-նախագահ՝ Ց. Տէրունին, հողային կոմիտէի ղեկավար՝ Արշ. Շիրինեանը և Մ. Հ. բէգ Խոջահանսկին, գաւառապետ՝ Մեսրոպ բէգ Սարատիկեանը, օգնական՝ Խանլար բէգը:

Գործադիր կոմիտէի նիստերի ժամանակ տեղի ունեցաւ կրքոտ պայքար, մասնաւորապէս, մուսաւաթականների կողմից, որոնք աշխատում էին իշխանութիւնը առնել իրենց ձեռքը: Այդ պայքարը, Զալիլ բէգ Սուլթանովի գլխաւորութեամբ, շարունակուեց դուրսն էլ և ծայր-աստիճան սրեց հայ—թրքական յարաբերութիւնները: Դրան նպաստում էին և բախումները թուրք քոչւորների և տեղական հայ ու ռուս գիւղացիների միջև: Տեղական թուրքերը բռնում էին քոչւորների կողմը, որից առաջ էին գալիս ընդհարումներ և տեղական հայերի ու թուրքերի միջև: Սեպտեմբերին աղուդի-վաղուդեցի թուրքերի ձեռքով սպանուեցին մի քանի սիսեանցիներ: Երթևեկութիւնը խանգարուեց. ճանապարհները դարձան վտանգաւոր:

Գործերը էլ աւելի խճճուեցին, երբ թուրքերը Զանգեզուրի թրքական մասը յայտարարեցին Գորիսից անկախ, և Դոնդարլու գիւղում կազմեցին առանձին կառավարութիւն՝ Մահմետական Կոմիտէ անունով՝ Զալիլ բէգի նախագահութեամբ: Թրքական շրջանների հայերը տեղափոխուեցին հայկական վայրեր. Գորիսից թուրքերը քաշուեցին թրքական շրջանները: Փաստօրէն Զանգեզուրը բաժանուեց երկու, իրարից անկախ մասերի: Նոյեմբեր ամսից լուծուեց և Գործադիր Կոմիտէի դիւանը, պետական հիմնարկութիւնները փակուեցին, գաւառապետը քաշուեց գործից, և ամէն բան խառնուեց իրար:

Այսպէս տևեց դրութիւնը մինչև 1918թ. յունուարի վերջերը: Յունու. 25-ին Գորիսում կազմուեց 18 հոգինոց միջկուսակցական մի խորհուրդ — 9 դաշնակցական և 9 միւս կուսակցութիւններից — որը աշխատեց կազմակեր-